

Հայաստանի և Բելառուսի խորհրդարանականների Վայոց ձորում



16.09.2014

2014 թվականի սեպտեմբերի 14-ին ՀՀ Վայոց ձորի մարզ այցելեցին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի անդամները՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի և ԲՀ ԱԺ Ներկայացուցիչների պալատի փոխնախագահ Վիկտոր Գումիսկու գլխավորությամբ: Հյուրերի թվում էր նաև Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Ստեպան Սուխորենկոն: Հյուրերին Արենի համայնքում աղ ու հացով դիմավորեցին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը, մարզպետի տեղակալ Սամվել Թարվերոյանը և Արենիի համայնքի ղեկավար Սերյոժա Սուքիասյանը, որից հետո պատվիրակության անդամներն ուղևորվեցին ՀՀ Վայոց ձորի մարզպետարան: Մարզպետարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն՝ մարզպետարանի ղեկավար կազմի և պատվիրակությունների անդամների մասնակցությամբ, որի ընթացքում երկու երկրների խորհրդարանների փոխնախագահները փոխադարձ ողջունի խոսքեր հղեցին՝